

5.3. 2014 թվականի նոյեմբեր ամսվա հիդրոոլեռնութաբանական իրավիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոոլեռնութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության, նոյեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր 0.5-1 աստիճանով:

Միջին ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 2-5 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում՝ նորմայից բարձր մինչև 1 աստիճան:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +10 +12°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +8 +10°C, ՀՀ Լոռու մարզում՝ +7 +8°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի նախալեռներում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +3 +7°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է նոյեմբերի 7-8-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +16 +18°C, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում՝ +14 +16°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ +22°C), ՀՀ Շիրակի մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +10 +14°C, ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +6 +11°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Սյունիքի նախալեռներում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -2 -4°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -6°C, Մասրիկ գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -7°C), Արագածոտնի նախալեռներում և Արարատյան դաշտավայրում՝ +0.3 +1°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում՝ +2 +3°C (ք.Դիլիջանում՝ -1.1°C):

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 5-6-ին: ՀՀ Գեղարքունիքի մարզում գրանցվել է -7 -14°C (Մասրիկ գյուղում՝ -18°C), ՀՀ Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Սյունիքի նախալեռներում և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -7 -12°C, Արագածոտնի նախալեռներում և Արարատյան դաշտավայրում՝ -4 -6°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -2 -3°C (ք.Դիլիջանում՝ -10°C), Սյունիքի հովիտներում՝ -2 +1°C:

Ամսական տեղումների քանակը ՀՀ Տավուշի մարզում կազմել է նորմայի 105-108%-ը (Բագրատաշեն գյուղում՝ 193%), ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 123-178%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 119-146%, Արարատյան դաշտավայրում՝ 116-226%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 127-172%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 124-240% (Մասրիկ գյուղում՝ 294%), ՀՀ Շիրակի մարզում՝ 130-294% (Ամասիա գյուղում՝ 62%, Աշոցք գյուղում՝ 77%), Սյունիքի հովիտներում՝ 194-260%:

Նոյեմբերի 1-4-ին, 16-25-ին և 28-29-ին տարածաշրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ (լեռնային և նախալեռնային շրջաններում՝ ձյուն): Նոյեմբերի 1-ին, 3-ին, 10-11-ին և 16-30-ին առանձին վայրերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Նոյեմբերի 30-ի դրությամբ տարածաշրջանների զգալի մասում հաստատվել է ձյան ծածկ, բացառությամբ Արարատյան դաշտավայրի, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի: Ձյան ծածկույթի բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3 229 մ) կազմել է՝ 67 սմ, ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի

մարզ)՝ 28 սմ, ք.Քաջարանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 26 սմ, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 25 սմ, ք.Սևանում և ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) համապատասխանաբար՝ 22 սմ և 19 սմ, մնացած շրջաններում՝ 5-16 սմ:

Ջրի միջին ամսական ելքերը հանրապետության գետերի մեծ մասում կազմել են նորմաների 60-90%-ը, առանձին գետերում (գետ Պաղջուր (դիտակետ՝ Գետահովիտ), գետ Մարտունի (Գեղհովիտ), գետ Որոտան (Որոտան) և գետ Գորիսգետ (Գորիս))՝ 120-150%, իսկ մի շարք գետերում (գետ Գետիկ (Գոշ), գետ Հախում (Ծաղկավան), գետ Ախուրյան (Ամասիա), գետ Կարկաչուն (Ղարիբջանյան), գետ Սևջուր (Տարոնիկ և Էջմիածին), գետ Մարմարիկ (Հանքավան) և գետ Ողջի (Կապան))՝ 10-50%:

Նոյեմբերի 30-ի դրությամբ ջրի լցվածությունն Ախուրյանի ջրամբարում կազմել է 40.1 մլն. խոր. մ (ջրամբարի ծավալը՝ 525.0 մլն. խոր. մ), Ազատի ջրամբարում՝ 8.98 մլն. խոր. մ (70.0 մլն. խոր. մ) և Ապարանի ջրամբարում՝ 9.78 մլն. խոր. մ (91.0 մլն. խոր. մ):

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում նախ իջել է 3 սմ-ով, այնուհետև բարձրացել 1 սմ-ով և նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 1 900.14 մ, որը 2013թ. նույն օրվա համեմատ ցածր է 5 սմ-ով: